



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱԶՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ AUTISM-Ի ԴԱՐՄԱՆՈՒՄԻ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Չորեքշաբթի, 25 Յունիսի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Հայաստանի մէջ Autism հիւանդութեան դարմանումին յատուկ ուսումնարան-դարմանատան ներկայացուցիչները՝ Տոքթ. Իրա Յէյլվէյլը, անոր գործակիցներէն՝ Արփի Արապեանն ու Արփիլէ Աւտալեան-Սարգսեանը, որոնք Ազգ. Առաջնորդարան եկած էին Առաջնորդ Սրբազանին ծանօթացնելու իրենց աշխատանքին բնոյթն ու կտրած ճամբան:

Հիւր ներկայացուցիչները առաջին հերթին մանրամասնութիւններ փոխանցեցին Autism հիւանդութեան մասին, ըսելով, որ սա կանուխ մանկութեան նշմարուող հիւանդութիւն մըն է, որ ջղային դրութեան ու մեքենական այլ դրոյթներու անկանոն գործունեութեամբ կ'արտայայտուի: Հազուադէպ այս ախտը տարածուած է աշխարհի բոլոր ժողովուրդներուն մէջ եւ անոր դարմանումին ու անով ախտաճանաչուած մանուկներու հոգածութեան լծուած է Autism International Foundation-ը: Նման պարագաներ արձանագրուած են նաեւ Հայաստանի մէջ. յիշեալ միջազգային հիմնարկը հայ մանուկներու հետ գործելու առաջին առիթը ունեցած է 2006ին ու աշխատանքը զարգացնելով՝ Երեւանի մէջ հաստատած է ուսումնարան-դարմանատուն մը:

Տոքթ. Յէյլվէյլ յայտնեց, որ պատուիրակութեան այցելութեան նպատակն է առաջին հերթին Առաջնորդ Սրբազանը տեղեակ պահել, թէ նման հաստատութիւն մը կը գործէ Հայաստանի մէջ, ապա նաեւ՝ խնդրել անոր օրհնութիւնն ու կարելի աջակցութիւն:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց նուիրեալ ծառայողները, որոնք յանձն առած են մարդասիրական առաքելութիւն մը: Ան յաւելեալ լուսաբանութիւններ խնդրեց հիւանդութեան ու հաստատութեան աշխատանքի բնոյթին մասին: Ան յայտնեց, որ մեր ժողովուրդն ու բարեսիրական միաւորներ աջակցութեան ձեռք կ'երկարեն նման ծառայողներու եւ իր կարգին, պատրաստակամութիւն յայտնեց կարելիին սահմաններուն մէջ նպաստ բերելու այս աշխատանքին:

## **PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF AUTISM INTERNATIONAL FOUNDATION**

On the afternoon of Wednesday, June 25<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed representatives of Autism International Foundation who had come to the Prelacy to familiarize the Prelate with their work and mission. The delegation was comprised of President Dr. Ira Heilveil, Arpi Arabian, and Arpine Avdalyan-Sargsyan.

To begin with, the representatives conveyed details to the Prelate about the nature of the disorder and reported that the Autism International Foundation provides services to children diagnosed with the disorder domestically as well as internationally.

Members of the foundation first had the opportunity to work with Armenian children in 2006 and now provide services to autistic children in Armenia through the Armenian International Child Development Center in Yerevan. Dr. Heilveil went on to say that the purpose of their visit was primarily to keep the Prelate informed of the work of the center in Armenia, and to receive his blessings and support.

The Prelate highly commended the representatives and the foundation for their and requested further information on the nature of their humanitarian work as well as expressed his full support of their endeavors.